

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2020 թվականի առաջին կիսամյակում մարզպետի կողմից ընդունվել են 65 որոշումներ, գլխավոր քարտուղարի կողմից արձակվել են 168 հրամաններ:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 4644 և ելք են արվել 4170 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

Մարզպետարանի աշխատակազմում 2020թ հունիսի 30-ի դրությամբ թափուր են մարզպետարանի՝ 3 վարչական, 6 քաղաքացիական ծառայողների պաշտոնների հաստիքներ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից քաղաքացիական ծառայողների վերապատրաստման աշխատանքներ չեն իրականացվել, համաձայն ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման 8-րդ կետի/COVID-19-ի տարածումը կանխելու նպատակով/ :

Մարզպետարանի ստորաբաժանումները մեծ ուշադրություն են դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, ուսումնասիրմանը և լուծմանը: 2020 թվականի առաջին կիսամյակում մարզպետի մոտ կատարվել է 364 քաղաքացիների ընդունելություն:

Կիսամյակի ընթացքում ՀՀ Նախագահի ու վարչապետի աշխատակազմից, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 106 դիմումներ, որից՝ 7-ը ստացվել են Զերմուկի, 23-ը Վայքի, 76-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2020 թվականի առաջին կիսամյակում 216 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, իսկ 5-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 364 քաղաքացիներ, որից՝

1. Դրամական օգնություն	216
2. Նպաստի հարցերով	2
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	16
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	12
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	45
6. Աշխատանքի տեղավորման	8
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	4
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	0
9. Պետ.պատվերով բուժօգնություն	5
10. Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով	18
11. Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով	18
12. Այլ հարցերով	20

Աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ՝

Փ. Ղազարյան